Doi: 10.56737/2953-7843-2024.03-81

ՄԵԽԱԿ ԱՅՎԱԶՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. դոկտոր,
Ֆրիդրիխ Ալեքսանդրի համալսարան, Էրլանգէն-Նիւրնբերգ

ՎԱՆԱԿԱՆ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԸՄԲՌՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՆԱՐԵԿԱՎԱՆՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ[1]

Ա. ԽՆԴՐԻ ԲՆՈՐՈՇՈՒՄ

Հայտնի է, որ Ժ. դարում հայկական թագավորություններում, համաձայն Բարսեղ Կեսարացու վանական կանոնադրության, կազմավորվում եւ սկսում են գործել վանական բազմաթիվ միաբանություններ, որոնց մի մասը վերածվում է վանական նշանավոր գիտաուսումնական կենտրոնների[2]։

Այս վանական հաստատությունների շարունակական կազմավորմանը զուգընթաց՝ խնդիր է դրվում ձեւակերպել վանական ապրելակերպի ըմբռնումն ըստ իր կանոնական առաջացման ձեւի։ Տվյալ ժամանակաշրջանից մեզ հասած գրականության մեջ, որը մեծ մասամբ վանական դպրոցների գործունեության արգասիք է, չի հանդիպում գոնե մեկ գրվածք, որի էջերում կարելի լիներ գտնել վանական միասնական ապրելակերպի դրույթներին առնչվող մեկնաբանություններ, առավել եւս երբ վանականության միջավայրում տարածվում էին թոնդրակյան հակաեկեղեցական ուսմունքի գաղափարներ։ Նարեկավանքում ավանդված գրականությունը՝ Անանիա Նարեկացու «Խրատները», Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» եւ «Բան խրատու»[3] գործերը թույլ են տալիս բավականա-

---

[1]* *Ստացվել է՝ 20.11.2023, գրախոսվել է՝ 5.12.2023։*

Էլ. հասցե՝ mekhak.ayvazyan@outlook.de։

[2] *Տե՛ս* Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ, *Պատմութիւն Տիեզերական, Մատենագիրք Հայոց, հտ. Ժե., գիրք Բ., Անթիլիաս, 2010, Երրորդ հանդէս, գլ. է., էջ 749–755 (այսուհետեւ՝* Տարաւնեցի*)։ Վանական համայնքների կազմավորմանը սկիզբ է դնում Մաշտոց Եղվարդեցու առաջին վանական միաբանությունը Թ. դարի վերջում. «Յոր [զկզին Սեւանայ] միացեալ ժողովեցան եղբարց կազմութիւն, կանոնադրութեան սահմանաւ սրբոյն Բարսղի, միակրաւնք ի տան Աստուծոյ եղեալ […]» (նույն տեղում՝ Երրորդ հանդէս, գլ. Գ., 4–5, էջ 741–742)։*

[3] *Խրատների բնագրերի մասին տե՛ս* Հր. Թամրազյան, *Անանիա Նարեկացի. կյանքը եւ մատենագրությունը, Երեւան, 1986, էջ 192–222 (այսուհետեւ՝* Թամրազյան, *Անանիա)։* Գրիգոր Նարեկացի, *Մատեան Ողբերգութեան, Երեւան, 1985 (այսուհետեւ՝ Մատեան),* Գրիգոր

չափ խորամուխ լինել վանական հոգեւոր առաքինական ապրելակերպի աստվածաբանության մեջ, սակայն այստեղ եւս միանգամայն բացակայում են վանական ապրելակերպի բնորոշմանը վերաբերվող արծարծումները։ Այս խնդրի առնչությամբ ուշագրավ է Ուխտանես եպիսկոպոսի «Հայոց պատմութեան» առաջաբանը, որն իրենից ներկայացնում է Անանիա Նարեկացուն ուղղված պատասխանագիր. «Պատասխանի թղթոյն Անանիայի եւ խոստումն կատարել զհայցուածս նորա»[4]։ Սույն գրավոր հարաբերության շրջանակներում ի հայտ են գալիս վանական ապրելակերպին վերաբերող դրույթային ըմբռնումներ։

Նախ եւ առաջ պահանջ է առաջանում բնութագրել վանական եւ եկեղեցական միջավայրերում արծարծվող խնդրահարույց նյութը։ Սա անմիջականորեն առնչվում է վանական միասնական ապրելակերպին, որը մասնավորապես արծարծվում է Բարսեղ Կեսարացու վանական կանոնակարգության 7-րդ կետում, ուր աստվածաբանորեն հիմնավորվում է վանական համայնական, միաբանական ապրելակերպի անհրաժեշտությունը՝ ի տարբերություն վանական միանձնական կենցաղավարության[5]։ Այս ապրելակերպի բնորոշման տեսանկյունից է Ստեփանոս Տարոնեցին անդրադառնում վանական հաստատությունների կազմավորմանը. «Յայսմ ժամանակի [այսինքն՝ ի հայրապետութեանն տն Անանիայի Մոկացւոյ, 943–967] ծաղկեալ պայծառանայր կարգ կրաւնաւորական հանդիսից յաշխարհիս Հայոց։ Եւ ի յոլով տեղիս շինեցան եղբայրանոցք, եւ ժողովեցան միաբանակեացք հաւասարականք սիրովն Քրիստոսի [հմմտ. Գործք Բ. 44]։ [...] Արդ եկեալ բնակեցաւ [առաջնորդ հայր Յովհաննէս] յառաջասացեալ տեղին Կամրջաձոր կանոն կարգի ունելով զսահմանդրութիւն սրբոյն Բարսղի հայրապետին Մեծի ի վերայ առաքելական հիմանն՝ թէ էր նոցա ամենայն ինչ հասարակաց» [հմմտ. Գործք Դ. 32]»[6]։

Նարեկացի, *Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր առաքինութեան, էջ 681–724, Մատեան Ողբերգութիւնք եւ այլ երկսիրութիւնք, Անթիլիաս, 2003 (այսուհետեւ՝* Նարեկացի, *Բան խրատու)։*

[4] Ուխտանէս Եպիսկոպոս, *Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց, հտ. ԺԵ., գիրք Բ., Անթիլիաս, 2010, էջ 446–609, գլ. Ա. «Պատասխանի թղթոյն Անանիայի եւ խոստումն կատարել զհայցուածս նորա», Պատասխան Ա., էջ 446–455 (այսուհետեւ՝* Ուխտանես, *Պատասխան)։*

[5] *Տե՛ս* Բարսեղ Կեսարացի, *Գիրք հարցողաց, աշխատ.՝ Գաբրիելլա Ուլուհոջյանի, հտ. 1,* CSCO *536, Լուվէյն, 1993 (*Basilio di Cesarea. Il Libro delle Domande (Le Regole). Edito da Gabriella Uluhogian, CSCO *536,* Lovanii, *1993) (այսուհետեւ՝ Գիրք հարցողաց), հարց է., էջ 56–61։*

[6] Տարաւնեցի, *Երրորդ հանդէս, գլ. է., 16–17, էջ 750։*

Այնուհետեւ թվարկում է տարբեր գավառներում ստեղծված հայտնի միաբանությունները, այդ թվում նաեւ՝ Նարեկի միաբանությունը, որոնք հիմնվում են «նոյնագունակ եւ նոյն աւրինիւ»[7]. «[...] շինեցան կրաւնաւորանոցք, ճգնաւորականաց տեղիք Սեաւորդաց աշխարհին, հաւասարակեացք միաբանականք, ըստ առաջասացել կանոնին սահմանադրութեան սրբոյն Բարսղի [...]»[8]։

Վանական համայնքը, ըստ Կեսարացու, հետամուտ է լինում միայն մեկ նպատակի՝ իրականացնել առաքելական ապրելակերպը. «[...] զաւրինակ պահելով որ ի Գործսն պատմի Առաքելոցն վասն որոց գրեալն. «Ամենեքին հաւատացելքն էին ի միասին եւ ունէին զամենայն ինչ հասարակաց [Գործք Բ. 44]»։ Եւ դարձեալ. «Բազմութեան հաւատացելոցն էր սիրտ եւ անձն մի, եւ ոչ ոք ի նոցանէ զընչից իւրոց ասէր եթէ իւր իցէ, այլ էր նոցա ամենայն ինչ [Գործք Դ. 32]»[9]։ Տարոնեցին շեշտում է վանական ապրելակերպի այս գլխավոր գաղափարական սկզբունքը՝ «կանոն կարգի ունելով զսահմադրութիւն սրբոյն Բարսղի հայրապետին մեծի ի վերայ առաքելական հիմանն» (այսինքն՝ ըստ Գործք Բ. 44 եւ Դ. 32)։ Վաղքրիստոնեական առաքելական ապրելակերպի իրագործման գաղափարը, այսպիսիով, ներառված է Եկեղեցու շրջանակում՝ նախ եւ առաջ կանոնական վանականության առկայությամբ՝ ըստ Բարսեղ Կեսարացու վանական սահմանադրության, ինչպես ընդգծում է Տարոնեցին։

Պատահական չէ, ուրեմն, որ առաքելական ապրելակերպի եւ ավանդույթների շուրջ ծավալվող քննարկումները եւ այն խնդիրները, որոնք առաջ են գալիս կապված թոնդրակյան շարժման հետ, արդիական են դառնում ամենից առաջ վանական միջավայրում։ Ճիշտ այս խնդիրների շրջագծում է հանդես գալիս Անանիա Նարեկացին՝ իր հակաթոնդ-

---

[7] Տարաւնեցի, *Երրորդ հանդէս, գլ. Է., 34, էջ 752։*

[8] Տարաւնեցի, *Երրորդ հանդէս, գլ. Ը., 7, էջ 755։*

[9] *Գիրք հարցողաց, հարց Է., 160–161, էջ 60–61։ Այս երկու առաքելական ապրելակերպի դրույթները (Գործք 2. 44, 4. 32) առհասարակ Հին Եկեղեցուն բնորոշ վանական համայնական կենցաղավարության սկզբունքներն են։ Տե՛ս* K. Frank, Vita apostolica. Ansätze zur apostolischen Lebensform in der alten Kirche *(*Vita apostolica: *Առաքելական ապրելակերպի մեկնակետերը հին եկեղեցում),* ZKG *82 (1971), էջ 145–166։ Նույնը,* Imitatio Apostolorum im frühen ägytischen Mönchtum, Studia historico-ecclesiastica. Festschrift L Spätling, Rom, *1977, էջ 123–146։* M. Vicaire, L'imtation des apôtres: moines, chanoines et mendiants, IV–XIII siècles *(Ընդօրինակում առաքյալներին. վանականներ, կանոնիկներ, մուրացողներ, Դ.–ԺԳ. դարեր),* Paris, *1963։*

րակյան եւ այլ աղանդների դեմ ուղղված աշխատությամբ, որը հիշատակում է Տարոնեցին. «Սորա եւ գիրս է ասացեալ Ընդդէմ աղանդոյն Թոնդրակաց եւ այլոց հերձուածոց»[10]։ Այս համապատկերում է նաեւ մեղադրանք առաջադրվում Անանիայի դեմ՝ թոնդրակյան ուսմունքին հարելու մեջ[11]։

Հայտնի է նաեւ Գրիգոր Նարեկացու՝ Կճավի վանահորը եւ նրա համայնքին ուղղած հանդիմանական Թուղթը, որտեղ պահանջում է հեռացնել իրենց շարքերից թոնդրակյան ուսմունքի համակիրներին՝ սպառնալով նրանց բանադրությամբ, հրաժարվել ուսմունքից եւ ուսումնասիրել Անանիա Նարեկացու հակաթոնդրակյան աշխատությունները[12]։ Նշանակալից է այն դիտարկումը, որ Կճավի վանականների համար թոնդրակեցիների ապրելակերպը համապատասխանում է առաքյալների ապրելակերպի ավանդույթին[13]։ Նրանք համադասում են իրենց կրոնական ապրելակերպը առաքելական, քրիստոնեական նախասկզբնական ապրելակերպի հետ, որտեղ ավետարանական սիրո գաղափարը կենտրոնական է։ Սա ընդգծվում է Թղթում, երբ նշվում է, որ Կճավի վանականները նզովքը համարում են անպատեհ, որովհետեւ այն հակասում է Աստծու սիրո ավետարանական գաղափարին[14]։ Առաքելական ապրելակերպի իրականացումը պիտի բնականորեն ամենից գայթակղիչը լիներ վանական միաբանության համար, որը ձգտում է հասնել նույն նպատակին։

---

[10] *Տե՛ս նաեւ* ԹԱՄՐԱԶՅԱՆ, *Անանիա, էջ 54–74։*

[11] *Անանիան, մեղադրվելով թոնդրակեցիության մեջ, ստիպված էր պաշտոնապես արդարանալ ուղիղ հավատի դավանանքի եւ աղանդների մերժումների մասին գրավոր վկայությամբ, որը կոչվում է «Գիր խոստովանության»։ Տե՛ս Արարատ, 1892, Ա., էջ 6–18 (այսուհետ՝* ԱՆԱՆԻԱ, *Գիր խոստովանութեան)։*

[12] *Տե՛ս «Թուղթ ամենաշնորհ վարդապետին Գրիգորի Նարեկացւոյ», տե՛ս Գիրք Թղթոց, Մատենագրութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901, էջ 498–502, այստեղ՝ էջ 502 (այսուհետեւ՝* ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, *Թուղթ)։*

[13] ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, *Թուղթ, էջ 498. «[...] լուայ թէ անիծելոց Թոնրակեանցդ ի միջի ձերում բարեխորհրդիցդ յիշատակի, եւ հիացեալ՝ զարմացայ՝ ընդ այդպիսի անյարմար երեսս բանի, Աստուծոյ ատելեացդ՝ որ ասեն ձէնջ ասել առաւել զայդ գիտնական անուն Մուշեղայդ, թէ տեղեկացեալ եմք ի մերմէ առաքեալ թղթաբերէ, որ չեն նոքա աւտար յառաքելաւանդ դաւանութիւնէ [...]»։*

[14] ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, *Թուղթ, էջ 498. «Եւ թէ յո՞ր գիրս հրամայէ նզովել զոք, եւ զերջանիկ Տեառն մերոյ զԱնանիայի զզարմանագիծ հակաճառութիւն նամակին, զրաբանականս ասել կամ անպատեհս, կամ ոչ Աստուծով խաւսեցեալ»։ Խոսքը վերաբերում է Անանիա Նարեկացու «Գիր խոստովանությանը»։*

Քննարկվող խնդիրները, այսպիսով, առնչվում են հստակ վաղքրիստոնեական ապրելակերպի բնորոշմանը եւ իրականացմանը։ Բնականաբար Եկեղեցում պետք է առաջ գար ապրելակերպերի նվիրական սկզբունքները տարբերակելու եւ զատելու անհրաժեշտություն, մանավանդ որ թոնդրակեցիների ուսմունքն ընդունվում էր վանականության շրջանակներում եւ տեղիք տալիս խառնաշփոթությունների. պիտի ուսումնասիրվեր թոնդրակեցիների ուսմունքը, եւ կրկին անգամ հիմնավորվեր Եկեղեցու նվիրական կարգը եւ համապատասխանորեն՝ համայնքի ապրելակարգը։ Դա վերաբերում էր նաեւ վանականությանը։ Այս էր Անանիա Նարեկացու նպատակադրումը «Ընդդէմ աղանդոյն Թոնդրակաց եւ այլոց հերձուածոց» ուսումնասիրության մեջ, որի էջերում թերեւս տրված է եղել նաեւ վանական ապրելակերպի հիմնավորումը, որը սակայն հնարավոր չէ պարզել[15]։ Ահա ինչու ուշադրության կենտրոն է մղվում Ուխտանես Եպիսկոպոսի արդեն նշված պատասխանագիրը։

Բ. ՈՒԽՏԱՆԵՍ ԵՒ ԱՆԱՆԻԱ՝ ՈՒՍՈՒՑԻՉ–ԱՇԱԿԵՐՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Պատասխանագրի բովանդակությունն ակնհայտ ցույց է տալիս, որ Ուխտանեսն ուսում է ստացել Նարեկի վանական ուսումնագիտական կենտրոնում եւ աշակերտել է Անանիա Նարեկացուն։ Սա արտահայտվում է նախ եւ առաջ պատասխանագրի ոճի մեջ։ Ուխտանեսը պատասխանագրի սկզբում Անանիային կոչում է «հոգեւոր հայր». «Զառ ի Հաւրէն լուսոյ շնորհաց ընդունակի՝ եւ զՄիածնի Բանի Նորա բնակարանի՝ եւ զհամագոյակցի Հոգւոյն ընդունողի զտեառն իմոյ պատուականի եւ զհաւրն հոգեւորի ընկալայ [...]»[16], «Արդ զայս փոքր ի շատէ գրեցաք առ քեզ յաղագս սիրոյ՝ վստահեցեալ ի քոյին հեզութիւնդ՝ ո՛ հայր հոգեւոր [...]»[17]։

Ուսուցիչ–աշակերտ հարաբերության մասին են վկայում նաեւ հետեւյալ հասկացությունները. «հայր», «վարդապետ» եւ «աշակերտ», «որդի». «Արդ զորս դարձեալ գրեմ խանդակաթ սիրով սուրբ եւ բազմերջանիկ տեառն իմոյ հաւր եւ պատուեալ վարդապետիդ [...], համարձակիմ ծառայական բանիւ քո յետին եւ տրուպ աշակերտս՝ կամ թէ որդիս՝ [...].

---

[15] *Ուսումնասիրությունը կորսված է, տե՛ս* ԹԱՄՐԱԶՅԱՆ, *Անանիա, էջ 58–58։*

[16] ՈՒԽՏԱՆԷՍ, *Պատասխան, Ա. 2, էջ 446։*

[17] ՈՒԽՏԱՆԷՍ, *Պատասխան, Ա. 34, էջ 450։*

եւ ողջոյն առաք հրաման աշակերտաբար տալ՝ որպէս աւրէն է հրաշափառագունի վարդապետի»[18]։

Այս հասկացությունները հատուկ են վանական միջավայրին, որն իր արտահայտությունն է գտել Հաճախապատումի մի ճառում՝ ուղղված ճգնավորներին։ Այստեղ «Հոգեւոր հայր» կոչվում է վանական եղբայրության առաջնորդը. «Եւ զի վերակացուն հայր հոգեւոր կոչեցաւ, եւ ծնեալքն առ ի նմանէ հոգեւոր որդիք ըստ կարգի ճգնաւորաց. որ առաւել ունի զհանգամանս քան զմարմնաւոր ծննդոց. որպէս զմկրտութեանն ունի զնմանութիւն ըստ ամենայնի»[19]։ Այս կապակցությամբ անմիջապես տրվում է «հոգեւոր հայրության» գաղափարը. «Եւ զի պարտ է հոգեւոր ծննդոց հոգեւոր վարս ստանալ կատարեալ հնազանդութեամբ առ հոգեւոր հաւրութիւնն [...]»[20]։ «Հոգեւոր հայրությունից» է բխում Սուրբ Հոգու ներազդեցությամբ (ինչպես մկրտության խորհրդագործության ընթացքում) հոգածությունը հոգեւոր որդիների վարքի նկատմամբ։ Այսպես եւ Անանիան իր շնորհակրությամբ առաջնորդում է աշակերտներին դեպի հոգեւոր ասպարեզներ. «Եւ կանխաւ առաջնորդեալ զքեզ ինքն յանդաստան հոգեւորս ընդ արթնեալ եւ ընդ զգուշացեալ մշակս սպասես գալստեան Տեառն, բեղմնաւորեալ զմնակս [տարընթերցում՝ զմնասս] շնորհաց քոց՝ արկանել ի սեղանաւորս տաղանդ անշահութեամբ ի ներքին մարդն բնաւորեալ»[21]։ Ակնհայտ է, որ Սուրբ Հոգին է մարդու հոգեւորության, (աստված)գիտության աղբյուրը եւ շնորհների հեղինակը. Հոգեւոր հայրը, ուրեմն, նա է, ով կրում է Սուրբ Հոգու ձիրքը եւ լցված է աստվածային գիտությամբ, որի շնորհիվ նա դառնում է

---

[18] ՈՒԽՏԱՆԷՍ, *Պատասխան, Ա. 47, էջ 452։*

[19] *Տե՛ս* ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ, *Յաճախապատում ճառք, ԻԳ. «Երանելոյն Սրբոյն Գրիգորի խրատք ճգնաւորաց եւ ցոյցք հանդիսից, որ յառաքինութիւն յորդորեն». Մատենագիրք Հայոց, հտ. Ա., Ե. դար, Անթիլիաս, 2003, էջ 128–137, այստեղ՝ 91, էջ 134 (այսուհետեւ՝ Յաճախապատում, խրատք ճգնաւորաց)։ Ճառը վերագրվում է Գրիգոր Լուսավորչին։ Ճառերի մասին տե՛ս* ԴԱՎԻԹ ՍՐԿ. ՍԱՀԱԿՅԱՆ, *Կրկին «Հաճախապատում ճառերի» հեղինակի ու թվագրման հարցի շուրջ՝ Աբրահամ Տերյանի մի հրատարակության առթիվ, Բանբեր Մատենադարանի, 2022, հ. 33, էջ 165–185։*

[20] *Յաճախապատում, խրատք ճգնաւորաց, ԻԳ. 93, էջ 134–135։*

[21] ՈՒԽՏԱՆԵՍ, *Պատասխան, Ա. 40, էջ 451։ Վանական միաբանության կազմավորման մեջ կենտրոնական է Սուրբ Հոգու ազդեցությունը եւ ոչ միայն նրա ձիրքերի շնորհումը, այլ նրանց գործնական փոխանցումը. Գիրք հարցողաց, Է., 154, էջ 58. «Իբր զի հարկ է ի հաղորդական վարս, որ ի միումն է ներգործութիւն սրբոյ Հոգւոյն՝ յամենեսին միանգամայն անցեալ»։*

«աստուածուսոյց»[22], ինչպես Անանիան՝ «աստուածային շնորհիւ պայծառացեալ, եւ ձրիւք Սուրբ Հոգւոյն առլցեալ գիտութեամբ»[23]։

Ըստ ամենայնի՝ այս հիմնային ըմբռնումն է գործում Ուխտանեսի տվյալ շարադրանքի հետնախորքում. «[...] զի դու ինքն աստուածուսոյց ես, կարող ես եւ զայդոսիկ զգրեալսդ ուսուցանել հասարակաց։ Վասն զի ուսեալ յԱստուծոյ եւ ուսուցեալ զբազումս բազում անգամ, եւ ի մանկութենէ առեալ զլուծ խոնարհութեան, եւ ի նմանէ սնեալ եւ ուսեալ. զամենայն գործս առաքինութեան, եւ աստուածային բարեպաշտութեամբ դայեակեալ եւ դաստիարակեալ զմանկունս հաւատոյ Նոր Սիոնի (վանականներին.— Մ. Ա.)[24]»[25]։ Սա բովանդակում է նաեւ ուսուցչության սկզբունքը՝ կրթել բարքը «աստվածային բարեպաշտության» մեջ։

Բնականաբար նամակի բովանդակությունը որոշված է աշակերտի եւ վանական հոգեւոր հոր հարաբերությամբ. այն ամենը, ինչ Ուխտանեսն ուսանել է Նարեկավանքի առաջնորդից վանական հոգեւոր-ճգնական ապրելակերպի, ավետարանական սկզբունքների մասին, պետք է պատշաճ կերպով ներկայացներ իր ուսուցչին՝ նրան արժանիորեն իր վանական առաջնորդության եւ առաքինական կենցաղավարության մեջ պատվելու

---

[22] *Այս առումով կարեւոր է Բարսեղ Կեսարացու՝ Սուրբ Հոգուն նվիրված ճառի Թ. մասը, որտեղ ընդգծվում է հոգեւորության եւ շնորհների գործադրման սկզբունքը. «Խօսք Բարսղի Եպիսկոպոսի Կեսարու Կապպադովկվակացւոց ընդդէմ այնոցիկ, որք թերացուցանեն զփառս Որդոյն Աստուծոյ քան զՀօրն, եւ իջուցանեն զՀոգին Սուրբ ի հնազանդութիւն եւ հաւասարեն ընդ հաւասարութիւն արարածոց», աշխատ.՝ Յ. Քեռսէեանի, Գանձասար Դ., Երեւան, 1993, Թ., էջ 205. «Արդ, զմարդիկ մարմնաւորս արար հոգեւորս Հոգին Աստուծոյ [...] սոյնպէս մարդք, յորս մթերեալ բնակեցաւ ի զօրութենէ անտի Հոգւոյն Սրբոյ, յագեցին մեծացան իւիք շնորհօք, զոր արժանի եղեն ընդունել ի Նմանէ եւ յայմանէ, զոր ընկալան, առատացուցին, բաշխեցին եւ հասուցին կարոտելոց, քանզի ի զօրութենէ անտի Հոգւոյն Սրբոյ պատմեցաւ առ յապայն եւ հանդերձեալն յոմանց կանուխ գիտութեամբ, եւ խորհուրդք հանճարովն Նորա մեկնեցան, եւ օգնականութիւնքն պարգեւօքն Նորա բնախօսեցան, եւ վայելչութիւն երկնաւոր պայծառութեան իշխանական հրամանաւն Նորա ի հոգեւորսն յայտնեցաւ» (այսուհետեւ՝ ԽՕՍՔ ԲԱՐՍՂԻ)։*

[23] *ՈՒԽՏԱՆԷՍ, Պատասխան, Ա. 38, էջ 451. «Արդ զայսոսիկ գրեալս ի քեզ տեսանեմք կատարեալ, եւ աստուածային շնորհիւ պայծառացեալ, եւ ձրիւք Սուրբ Հոգւոյն առլցեալ գիտութեամբ, եւ հոգեւորական երգով գեղգեղմամբ գեր ի վերոյ քան զամենեսեան, եւ ամենայն պատուիրանաց Աստուծոյ հասեալ եւ հաստատեալ քան բազումս՝ ո՛վ աստուածազարդ եւ վսեմական տէր իմ տէր՝ եւ տիեզերական վարդապետ, իբր ծառ իմն բազմապտուկ եւ բարձր ի մէջ վայելուչ եւ աստուածատունկ դրախտիդ Նարեկդ կոչեցեալ ուխտի՝ սաղարթ առեալ եւ վարսաւորեալ վարուք առաքինութեամբ»։*

[24] *Տե՛ս Մ. ՇԻՐԻՆՅԱՆ, Ուխտի մանկունք եւ մանկունք եկեղեցւոյ, Էջմիածին, 2002, Ը., էջ 90–110։*

[25] *ՈՒԽՏԱՆԷՍ, Պատասխան, Ա. 36–37, էջ 450–451։*

համար։ Նամակի շարադրանքում կերպավորվում են միաժամանակ վանական հոգեւոր առաջնորդի բարձր անձնավորությունը եւ նրա առաջնորդելու ձիրքը։

Վանական աշակերտ–ուսուցիչ հարաբերության շրջանակում է ի հայտ գալիս վանական կենցաղավարության ըմբռնումը Եկեղեցում։ Ուխտանեսի վանական ապրելակերպի բնորոշումները փաստացի կրում են պաշտոնական բնույթ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Ուխտանեսը Սեբաստիայի հայոց թեմի առաջնորդն էր[26], որի հսկողության տակ էր գտնվում նաեւ վանականությունը։

Գ. ՎԱՆԱԿԱՆ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Որպեսզի հասկանալի դառնա, թե ինչ տեսանկյունից է Ուխտանեսը բնութագրում իր վանական ուսուցչին եւ նրա վարքը, հարկ է անդրադառնալ վանական կենցաղավարության սկզբունքներին։

Ուխտանեսն իր գրվածքում նախ անդրադառնում է Ավետարանի սիրո պատվիրաններին՝ քաջ գիտակցելով դրանց հույժ կարեւորությունը վանականների հոգեւոր կենցաղավարության մեջ[27]. «Արդ սկսցուք այսուհետեւ սկիզբն դնելով զսէրն եւ խոնարհութիւն որպէս վայել է քում սրբութեանդ եւ պարկեշտ վարուցդ՝ ով պատուական գլուխ եւ պատկառելի. զի իբրեւ ընդ հայելի հայելով ի քեզ տեսանեմք զամենայն բարեկարգութեան ձեւ եւ նմանութիւն եւ իր եւ աւրինակ[28]։ [...] Արդ ամենայն Գիրք աստուածաշունչք եւ աւգտակարք զաւգուտն մեզ ուսուցանեն պատուիրան, նախ սիրել զՏէր Աստուած յամենայն սրտէ [...]»[29]։ Սերը դեպի Աստված, ըստ Ուխտանեսի, բարձրագույն առաքինություն է՝ «կարի կարգաւոր եւ կատարելագոյն քան զամենայն սէր. եւ ո՛չ երբեք յագի անձն աստուածասիրին առ ի սիրել զԱստուած»։ Աստծուն իսպառ սիրելը «բարի է», «զի սիրել զՏէր Աստուած՝ բարի է ամենայն սրտէ», եւ սա հետեւում է իմաստունների եւ աստվածասերների ճանաչողությունից. «Եւ այսոքիկ իմաստնոց եւ աստուածասիրաց է գործ, որ կարիցեն ճանաչել իմաստութեամբ զխրատ՝

---

[26] *Մանրամասն տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, Ուխտանես, էջ 1032։*

[27] *Սիրո պատվիրանների մասին տե՛ս* ՈՒԽՏԱՆԷՍ, *Պատասխան, Ա. 11–33, էջ 447–450։*

[28] ՈՒԽՏԱՆԷՍ, *Պատասխան, Ա. 8, էջ 447։*

[29] ՈՒԽՏԱՆԷՍ, *Պատասխան, Ա. 15, էջ 448։*

ըստ իմաստնոցն բանի [Առակք Ա. 2]. զի սիրել զՏէր Աստուած՝ բարի է ամենայն սրտէ [...][30]։

Ուխտանեսի շարադրանքից պարզ է դառնում, որ նա իր ուսուցչին դասում է այս իմաստունների եւ աստվածասերների շարքին, որոնք, ճանաչելով Աստծու բարությունը, խրատում են՝ արթնացնել մարդու մեջ «անհագ» սերը դեպի Աստված։ Մարդու ներսում Աստծու սիրո արթնացումն ընդհանրապես վանական ապրելակերպի կիզակետն է, որը բխում է Կեսարացու վանական կենցաղավարության սկզբունքներից։ Պատահական չէ, որ Կեսարացին արդեն իր սահմանադրության առաջին երեք հարցերում արծարծում է սիրո պատվիրանների կարգավորության խնդիրները (Մատթ. ԻԲ. 36 եւ 37)՝ որպես միասնական ապրելակերպի եւ բարեպաշտության հիմնադրույթներ. «[Հարց. 1] Քանզի ետ մեզ Բանն իշխանութիւն հարցանել, նախ քան զամենայն աղաչեմք ուսանել եթէ կարգ իցէ եւ հետեւումն ի պատուիրանս Աստուծոյ, որպէս զի զոմն լինել առաջին եւ զայլն երկրորդ եւ որ ըստ այսմանէ [...]»[31]։ Համապատասխանաբար երկրորդ հարցում արծարծվում են սիրո առաջին պատվիրանը (Մատթ. ԻԲ. 36) եւ մարդու բնական սիրելու կարողությունը[32], իսկ երրորդում՝ սիրո երկրորդ պատվիրանը (Մատթ. ԻԲ. 37), թե ինչ է նշանակում սիրել մերձավորին[33]։ Ըստ Կեսարացու՝ սիրո պատվիրաններն առաջնային եւ կենտրոնական են, քանի որ դրանք պարունակում են բոլոր պատվիրանները[34]։ Ուրեմն՝ երբ Ուխտանեսը հստակ կարեւորում է սիրո պատվիրանների նշանակությունը, դա ցույց է տալիս, որ նա լիովին տիրապետում է այս իմացությանը եւ անցել է Անանիայի վանական վարքի կրթության դպրոցը, որտեղ սկզբունքորեն առաջնային է Աստծու սիրո արթնացումը մարդու մեջ. «[...] միայն ի գործ արկանելն մեր հետամուտ լինել եւ գտանել զսէրն առ Աստուած»[35]։

Ըստ Կեսարացու՝ սերը դեպի Աստված աճում է, երբ մարդ, ամբողջովին հրաժարվելով աշխարհական բարքերից, անդադար խոկում է Աստծու,

---

[30] *Անդ։*

[31] *Գիրք հարցողաց, Ա. 101–103, էջ 40–41։*

[32] *Գիրք հարցողաց, Բ. 104–122, էջ 41–48։*

[33] *Գիրք հարցողաց, Գ. 123–127, էջ 48–49։*

[34] *Գիրք հարցողաց, Բ. 105, էջ 42. «Գիտել միայն արժան է զի այս մի միայն է ուղղութիւն, բայց զաւրութեամբ զամենայն պարունակող զպատուիրանս։ Զի որ սիրէ զիս, ասէ Տէրն, զպատուիրանս իմ պահեսցէ [Յովհ. ԺԴ. 23]»։*

[35] Անանիա Նարեկացի, *Յաղագս զղջման եւ արտասուաց, պատկեր 1898, 9, էջ 198 (այսուհետեւ՝* Անանիա, *Յաղագս զղջման)։*

Նրա գործերի, աստվածային տնօրինության մասին[36]։ Այս իմաստային դաշտում պարզորոշ սահմանվում է վանական համայնքի կենցաղավարության նպատակը՝ հետեւել Քրիստոսին՝ կատարելով Նրա կամքը, ինչպես որ Նա է կատարում է Իր առաքչի կամքը (ըստ Հովհ. Զ. 38)[37]։ Սա կարող է կատարվել, երբ հոգու սիրո մղումն ուղղվում է դեպի բարձրագույն բարիք՝ դեպի Աստված։ Այս պատճառով հոգեւոր փորձառություն ունեցող վանական առաջնորդի հիմնական պարտականությունը հոգում բնավորված՝ Աստծուն սիրելու կարողությունն արթնացնելը եւ այն կրթելն է՝ ըստ սիրո պատվիրանների։ Հետեւյալ խոսքերը կարեւորվում են այն առումով, որ բացահայտում են Կեսարացու վանական սահմանադրության ծրագրի վարժապետական բնույթը. «Քանզի որպէս զվարդապետարան զպատուիրանացն Աստծոյ առեալ, գործել զերկիր խնամով եւ սնուցանել վերակացութեամբ, եւ ի կատարումն ածել Աստուծոյ շնորհացն բնաւորեցաւ։ Վասն որոյ եւ մեք զփոյթ ձեր (վանականների.— Մ. Ա.) որպէս զհարկաւոր նախատեսութեան ընկալաք, Աստուծոյ տալով եւ ձեր աղաւթս առնելով մեզ զծածկեալն ի ձեզ զչերմութիւն աստուածային գթոյն (սիրո.— Մ. Ա.) ըստ տուեցելոյն ձեզ առ ի Հոգւոյն զաւրութիւն, յարուցանել փութամբ»[38]։

Վանական ուսուցիչը կոչված է այսպես փութաջանորեն, Սուրբ Հոգու օգնությամբ, կրթելու իր աշակերտներին եւ ուղղորդելու նրանց հոգու կարողությունները՝ սաների հոգիներում նախապես սերմանելով աստվածահաճո բարքեր. «Այսպէս ուրեմն, եւ յոյժ մանաւանդ, զաստուածային գթոյն (սերը Աստծու նկատմամբ.— Մ. Ա.) ոչ արտաքուստ է ուսումն, այլ համայն ի լինելիութեան կենդանի մարդոյն ասեմ, զսերմնական բանն ի մեզ տնկեալ, յինքենէ ունենալով զպատճառ առ ի սիրելն ընտանենալ»[39]։ Կեսարացին բնորոշում է «սերմանկան բանը»[40], որն ստացել է մարդն իր արարչության ժամանակ, որպես «զսիրոյն զաւրութիւն». «Պատուիրան

---

[36] *Գիրք հարցողաց, Ե. «Վասն անգրաղ մտածութեան», 134–135, էջ 51–52։*

[37] *Գիրք հարցողաց, Ե. 137, էջ 52։*

[38] *Գիրք հարցողաց, Բ. 105, էջ 42։*

[39] *Գիրք հարցողաց, Բ. 104, էջ 41–42։*

[40] *«Սերմանկան բան»* (λόγος σπερματικός – *որպես բանականությանը սաղմնավորված ուժ, ներզորություն) հասկացությունը հատուկ է ստոիկների աշխարհըմբռմանը (տե՛ս* L. Stein, Die Psychologie der Stoa *[Ստոայի հոգեբանությունը], հտ. 1, 1886, գլուխ* IV, *էջ 48–54 եւ 61, ծնթ. 87)։ Այն նախասկզբնական Հոգու այն մղիչ ուժն է, որը դրդում է ստեղծման, զարգացման եւ ձեւավորման համապատասխան բանականության եւ ըստ նպատակի (տե՛ս նույն տեղում, էջ 49)։ Ինչպես աշխարհամբողջությունում գործում է աշխարհը զարգացնող եւ ձեւավորող «սերմնական բանը», այնպես էլ այն գործում է մարդու՝ որպես միկրոտիեզերքի*

այժմ առեալ սիրել զԱստուած, զսիրոյն զաւրութիւն վաղվաղակի յառաջին կազմութեան զկործանելն ստասցուք. եւ ապացոյց ոչ արտաքուստ, այլ զնոյն ինքն զայս յինքենէ եւ յինքեան ուսցի»[41]։

Հոգու այս բնականոն շարժումը՝ արմատական ներզորությունը, որի պատճառը «սերմնական բանն» է, ուղղված է դեպի բարին եւ լավը, եւ քանի որ բարձրագույն բարին միայն Աստվածն է, ապա այն վերջնականորեն ուղղված է դեպի Աստված. «Բարի Աստուած, բարւոյ ամենայն ոք ցանկայ. Աստուծոյ ուրեմն ամենայն ցանկայ»[42]։ Նույն այս միտքն արտաբերում է Ուխտանեսը, երբ խոսում է Աստծու սիրո մասին. «[...] վասն զի աղբիւր է Աստուած ամենայն բարեաց, եւ արբուցանէ զպասքեալ ոգիս՝ ըստ իւրաքանչիւր ցանկութեանց՝ ի բարի եւ ի սուրբ շնորհաց. քանզի Ինքն է բարի եւ աղբիւր բարութեանց, եւ ի Նմանէ բղխէ ամենայն բարիք. եւ որք սիրենն զՆա, լինի պարգեւատու [...]»[43]։

Սիրո այս մղումը, ըստ Կեսարացու, բարձրացնում է մարդուն դեպի Աստված, դեպի Քրիստոսի հետ միասնություն[44]։ Հոգու ներզորության շարժման ուղղվածության հետ են կապվում այսուհետեւ բարոյագիտությունը, վարքի եւ բարքի կրթումը[45]։ Ակնհայտ է այլեւս, որ բարքը կրթելու խնդիրը, ըստ Աստծու պատվիրանների, դրվում է վանական կենցաղավարության սահմանադրության հիմքում (Հարց. Ա., Բ., Գ.)։ Անանիա Նարեկացին անդրադառնում է այս հիմնական կրթական խնդրին իր «Յաղագս զղջման եւ արտասուաց» խրատում՝ ուղղակի վկայակոչելով Բարսեղ Կեսարացու վանական սահմանադրության երկրորդ հարցը՝ կապված սիրելու ունակության հետ։ Սա ցույց է տալիս խրատի առանցքային նշանակությունը Նարեկավանքի վարքաբանության մեջ. «Յորժամ զինքն քեզ գործ առնես, փոյթ անձին կալեալ ջանս դնես, յայնժամ շնորհն ուսուցանէ զքեզ թէ ո՞րպէս պարտ է առնել։ Զոր օրինակ ուսանի ոք արուեստ յումեքէ, եւ զարուեստն ժամանակ ինչ ի գործ արկանէ՝ յայնժամ ի յարուեստէն առաւել հասկանայ քան զոր ի վարդապետէն ուսաւ. նոյնպէս

մեջ (տե՛ս նույն տեղում, էջ 209–210)։ Ջենոնը համարում է այն մարդու հոգու ներզորություն (տե՛ս նույն տեղում, էջ 61, ծնթ. 87)։

[41] Գիրք հարցողաց, Բ. 108, էջ 43։

[42] Գիրք հարցողաց, Բ. 111, էջ 44։

[43] ՈՒԽՏԱՆԷՍ, Պատասխան, Ա. 16, էջ 448–448։

[44] Տե՛ս Գիրք հարցողաց, Բ. 109–111, էջ 43–44։

[45] Հոգու ներզորությունների ճիշտ, այսինքն՝ ըստ պատվիրանների գործադրման մասին տե՛ս Գիրք հարցողաց, Բ. 107, էջ 42–43։

եւ դու զարտասուք աղօթել քեզ գործ արա, եւ ուսանիս զարուեստն, եւ ի շնորհէն վարդապետիս. քանզի սուրբն Բարսեղ ի սիրոյն հարցուածին այսպէս ասէ. ոչ լուսոյ խնդալն, եւ ոչ կենաց խնամնածելն յումեքէ ուսանել. եւ ոչ մարցն սիրել զմանկունսն, եւ զայս նոյն ինքն ի վայրենի գազանս է տեսանել. զի բնութեամբ սիրեն զծնունդս իւրեանց. այսպէս եւ Աստուած անդէն ի բնածին բարսն տնկեաց զսէրն իւր ի մեզ[46]. միայն ի գործ արկանելն մեր հետամուտ լինել եւ գտանել զսէրն առ Աստուած, այսինքն է՝ արտասուօք որ ըստ Աստուծոյ. եւ ցանկ մնալի սէրն»[47]։

Բարքի այս անհատական կրթության հարցում Անանիան ամբողջովին հետեւում է Բարսեղ Կեսարացու մարդաբանությանը, ըստ որի՝ վանական վարքաբանությունն ստանում է մարդաբանական ստույգ հիմնավորում։ Վանականը, ուրեմն, պետք է, ըստ Անանիայի, փութաջանությամբ, իր հոգու ուժերի լարումով հետամուտ լինի իր առաջնային նպատակին՝ «միայն ի գործ արկանելն մեր հետամուտ լինել եւ գտանել զսէրն առ Աստուած»։ Այս հոգեւոր վարժական ջանքում Սուրբ Հոգին Իր շնորհազդումով (ըստ Հռովմ. Ը. 26) դառնում է իրական ուղեցույց-ուսուցիչ. «...զարտասուք աղօթել քեզ գործ արա, եւ ուսանիս զարուեստն, եւ ի շնորհէն վարդապետիս»։[48] Այսինքն՝ ճգնողը պետք է իր որոնումների մեջ կարողանա գտնել «զսէրն առ Աստուած» եւ այնպիսի խորազգացական հմտություն ձեռք բերի, որ շնորհը մարդու մեջ ինքնաբուխ գործելու ազատություն ունենա՝ «շնորհքն ի քո հոգիդ ազդ առնեն»[49]։ Ուսուցիչը կարող է միայն ցույց

---

[46] *Տե՛ս Գիրք հարցողաց, Բ. 104, էջ 41–42, տե՛ս նույն տեղում՝ 113, էջ 44–45։*

[47] Անանիա, *Յաղագս զղջման, 9, էջ 198։*

[48] *Անանիայի այս մոտեցումն ուղղակիորեն առնչվում է Բարսեղ Կեսարացու այն մտքի հետ, ըստ որի՝ Սուրբ Հոգին անձամբ աստվածասերի համար ուսուցիչ եւ օգնական է, տե՛ս* Խօսք Բարսղի, *Թ. էջ 203. «Եւ ամենայն, որ միանգամ ի կեանս անդ բարեաց է եւ յանուն ճշմարիտ Աստուծոյ լի կատարեալ հանգչի, սիրովն Նորա է, որ առ Նմա, քանզի զօրութեամբն, որ առ ի Նմանէ [այսինքն՝ Սուրբ Հոգուց] առնէ զմերձաւորութիւնս Իւր Աստուած առ աստուածասէր միտս, զի եղիցի նոցին վերակացու, տեսուչ, ուժատու եւ օգնական աներեւոյթ եւ անքնին ծածկութեամբ»։ Այստեղ մեկ անգամ եւս ընդգծվում է Աստծուն սիրելու նշանակությունը։*

[49] *Թերեւս սա ներհայեցական անհատական բարեպաշտության բնույթն է, որտեղ էական դեր են խաղում անմիջական շնորհապրումները եւ Քրիստոսի անհատական փնտրումը՝ «ընդ Քրիստոսի լինել», որը կասկածի տակ է դնում Նարեկյան վանական դպրոցի հոգեւոր-ներհայեցական ապրելակերպը, եւ այնտեղ թոնդրակյան ուսմունքի տարրեր են տեսնում։ Թոնդրակեցիների հոգեւոր կյանքում մեծ դեր է խաղում, թերեւս, անմիջական շնորհազդեցությունը, որովհետեւ նրանց առաջնորդները, ըստ Նարեկացու հավաստության, կրում են «Քրիստոս» տիտղոսը* (Գրիգոր Նարեկացի, *Թուղթ, էջ 500. «Թէ որ զգլխաւոր աղանդին իւրեանց գարշութեանն յանդգնեալ Քրիստոս անուանեն [...]»)։ Սա նշանակում է, որ նրանք*

տալ, թե ինչպես է կատարվում ներհայեցական վարժանքը։ Վստահաբար այս մտածելակերպի ազդեցությամբ են ստեղծվել Անանիա Նարեկացու խրատները, որոնք իրենցից ներկայացնում են ներածականներ՝ որոշակի հոգեւոր ներապրումների հասնելու համար[50]։

Այսպիսով՝ Անանիա Նարեկացու խրատը, որը սերտորեն կապված է Բարսեղ Կեսարացու երկրորդ հարցի հետ, հստակ ի հայտ է բերում վանական առաքինական ապրելակերպի առանցքային դրույթը՝ «միայն ի գործ արկանելն մեր հետամուտ լինել եւ գտանել զսէրն առ Աստուած», որը նշանակում է հետեւել եւ նմանվել Քրիստոսին։ Այս կապակցությամբ պետք է նշել, որ Ուխտանեսը, լինելով վանական վարդապետի աշակերտ, լիովին քաջատեղյակ է անձը կրթելու այս վանական ծրագրին։

Դ. ՎԱՆԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԿԵՐՊԱՐԸ. ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՀԵՏԵՒՈՐԴ ԵՒ ԱՇԱԿԵՐՏ

Ինչպես արդեն նշվել է, ցանկանալով իր պատասխանագրում ի ցույց դնել Անանիա Նարեկացու բարձր կերպարը որպես վանական առաջնորդի, հոգեւոր հոր եւ ուսուցչի՝ Ուխտանեսը նպատակադրված կերպով անդրադառնում է սիրո եւ խոնարհության առաքինություններին. «Արդ սկսայց այսուհետեւ՝ սկիզբն դնելով զսէր եւ խոնարհութիւն [հմմտ. Մատթ. ԺԱ. 29]՝ որպէս վայել է քում սրբութեանդ եւ պարկեշտ վարուցդ՝ ո՛վ պատուական գլուխ եւ պատկառելի. զի իբրեւ ընդ հայելի հայելով ի քեզ տեսանեմք զամենայն բարեկարգութեան ձեւ եւ նմանութիւն եւ իր եւ աւրինակ։ Նախ առաջնորդական պետութեամբդ բարգաւաճեալ, եւ ապա խորհրդով յաւելեալ լաւագունիւ»[51]։ Այն, ինչ արտահայտվում է շարադրանքում, վերաբերում է վանական առաջնորդի՝ առաքինության կատարյալ օրինակ լինելուն.

ընդունվում էին համայնքի կողմից՝ որպես Քրիստոսի Հոգու անմիջական կրողներ (ըստ Բ. Կորնթ. Գ. 17–18)։ Խնդրի ողջ բարդությունն այն է, որ մարդն իր իսկ անհատական զգացողական ընկալումով խորամուխ է լինում ինքնուրույն գտնելու Քրիստոսին. այն, ինչ հատուկ է անհատականապես շնորհակիրներին, կարող է խնդրահարույց լինել Եկեղեցու համար։ Այդպես եւ Անանիան կյանքի վերջին շրջանում մեղադրվում է աղանդավորության մեջ, ենթարկվում բանադրության, սակայն շուտով նորից հաստատվում իր նախկին կարգավիճակում (տե՛ս ԹԱՄՐԱԶՅԱՆ, *Անանիա, էջ 48–52)։*

[50] Խրատների մասին տե՛ս ԹԱՄՐԱԶՅԱՆ, *Անանիա, էջ 192–222։*

[51] ՈՒԽՏԱՆԷՍ, *Պատասխան, Ա. 8, էջ 447 եւ 52, էջ 453. «Եւ յաղագս այսորիկ յառաջադրեալ նախակարգեցի զխորհուրդ սիրոյ եւ խոնարհութեան ի կարգի պատմութեանս. զի զքեզ տեսանելով յիմս խոնարհեալ փոկրկութիւն սակս սիրոյ եւ խոնարհութեան։»*

առաջնորդը պետք է լինի Քրիստոսի ճշմարիտ աշակերտության օրինակ. «Արդ զայս փոքր ի շատէ գրեցաք առ քեզ յաղագս սիրոյ՝ վստահեցեալ ի քոյին հեզութիւնդ՝ ո՛հայր հոգեւոր. քանզի գիտեմք զքեզ ճշմարիտ աշակերտ գոլ Յիսուսի հեզոյն եւ մարդասիրին, եւ ուսեալ ի Նմանէ հեզութիւն եւ խոնարհութիւն զոր սկսաւ Ինքն առնել եւ ուսուցանել. «Ուսարո՛ւք, յինէն, զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ [Մատթ. ԺԱ. 29]», եւ՝ «Ես յո՞ բնակեցայց, եթէ ո՛չ ի հեզս եւ ի խոնարհս» [տե՛ս Եսայի ԿԶ. 2]. որ արդարեւ բնակարան են այնպիսիքն Սրբոյ Երրորդութեանն. «Ես եւ Հայր իմ առ նա եկեսցո՛ւք՝ ասէ, եւ աւթեւանս առ նա արասցուք [տե՛ս Յովհ. ԺԴ. 23]», զի ուր Հայր եւ Որդի բնակի, եւ Հոգին Սուրբ անմեկնելի իսկ լինի. Քանզի. «Որ խոնարհեցուցանէ զանձն իւր, բարձրասցի նոքաւք [տե՛ս Մատթ. ԻԳ. 12, Ղուկ. ԺԴ. 11]»[52]։

Սիրո եւ խոնարհության առաքինությունները, որոնք ներհատուկ են Քրիստոսին, այն կարեւորագույն առաքինություններն են, որոնք առհասարակ պետք է բնութագրեն վանական համայնքի առաջնորդին։ Ուխտանեսի այս նշումները պատահական չեն, դրանք բխում են վանական ապրելակարգից։ «Ո՞վ կարող է լինել վանական համայնքի առաջնորդ» հարցի պատասխանը տրվում Բարսեղ Կեսարացու վանական սահմանադրությունում. «[Հարց. ԼԵ.] Զառաջնորդ եղբայրութեանն, որպիսի լինել արժան է, եւ որպէս արժան ի միաբանութիւն ածել զկենակիցսն [...]»[53]։ Առաջնորդն իր վարքով պիտի իր աշակերտների համար պատվիրանապահության կատարյալ օրինակ լինի՝ ըստ առաքելական հորդորանքի. «Արդ՝ արժան է զվերակացուն, յիշելով զԱռաքելոյ զպատուէրն «Աւրինակ լինիջիր հավատացելոց (Ա. Տիմոթ. Դ. 12)» ամենայն պատուիրանացն Տեառն յայտնի աւրինակ զիւր զվարսն տալով [...]»[54], իր խոնարհության գործերով՝ Քրիստոսի ճշմարիտ օրինակ, որն իր վրա է վերցնում տկարներին ուսանելու հոգսը՝ մղելով նրանց նմանվել Քրիստոսին. «Զի եթէ սահմանք քրիստոնէի նմանութիւն Քրիստոսի չափով մարդանալոյն, ըստ ի վերայ ածելոյ իւրաքանչիւր կոչման, որ զառաջնորդութիւն բազմացն հաւատացեալն են, դեռեւս տկարագոյնսն իւրեանց միջնորդութեամբն յառաջ ածել պարտին ի Քրիստոսի նմանութիւնն, ըստ երանելոյն Պաւղոսի ասել. «Նմանողք ինձ եղերուք, որպէս եւ ես Քրիստոսի [Ա. Կորնթ. ԺԱ. 1]»[55]։

---

[52] ՈՒԽՏԱՆԷՍ, *Պատասխան, Ա. 34, էջ 450։*
[53] *Գիրք հարցողաց, ԼԵ. 364, էջ 125։*
[54] *Գիրք հարցողաց, ԼԵ. 365, էջ 126։*
[55] *Տե՛ս Գիրք հարցողաց, ԼԵ. 366, էջ 126։*

Առաջնորդը, որին վստահվում է վանական համայնքը, պիտի իր վարքագծով նմանվի Քրիստոսին այնպես, ինչպես Պողոս առաքյալն է իր իսկ օրինակով հորդորում նմանվել Քրիստոսին։ Խոնարհության առաքինությունը ենթադրում է առաջնորդելու արժանիք, որի չափանիշը Քրիստոսն է. «Արդ՝ նախ առաջին նոցա (առաջնորդների.– Մ. Ա.), ըստ տուելոյն զխոնարհութեան սահման ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ուղղելով, աւրինակ ճշմարիտ արժան է լինել. «Ուսարուք, ասէ, յինէն, զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ [Մատթ. ԺԱ. 29]»։ Հեզութիւն բարուց եւ սրտի խոնարհութիւն նշանակեսցէ զառաջնորդն»[56]։

Խոնարհությունն առհասարակ վանական միջավայրում այն հիմնական առաքինությունն է, որը պետք է յուրաքանչյուրի համար վերածվի հոգու կեցվածքի։ Այսպես՝ երբ տրվում է «Զինչ է խոնարհութիւն, եւ ո՞րպէս զնա ուղղեսցուք» հարցը, պահանջվում է բոլոր գործերում վարժվել եւ կրթվել խոնարհության մեջ՝ «հանապազ խորհեալ ընդունել զբարս խոնարհութեանն, որպէս ի ներքս տպաւորել սովորեաց»[57]։

Անանիան ընդգծում է նույնպես՝ մեջբերելով նույն ավետարանական խոսքերը, ինչպես սահմանադրության ԼԵ. հարցում (Փիլ. Բ. 3, Մատթ. ԺԱ. 29, Ղուկ. ԺԴ. 11), որ խոնարհությունը բոլոր առաքինությունների հիմքն է. «Արդ հիմն առաքինութեան է խոնարհութիւն եւ ամենայն սուրբքն խոնարհութեամբ եղեն հաճոյ Աստուծոյ», եւ «խոնարհութիւն է գլուխ առաքինութեան»[58]։ Ակնհայտ է, որ Ավետարանի Մատթ. ԺԱ. 29-ի խոսքը, որը պահանջում է հեզ եւ խոնարհ լինել, այլեւս որոշիչ է ոչ միայն վանական առաջնորդի ընտրության, այլեւ առհասարակ Քրիստոսի ճշմարիտ աշակերտության համար[59]։ Սիրո եւ խոնարհության առաքինությունները, ըստ Անանիայի, նույնպես միաբանական ապրելակերպի գրա-

---

[56] *Գիրք հարցողաց, ԼԵ. «Զինչ է խոնարհութիւն, եւ ո՞րպէս զնա ուղղեսցուք», 366–367, էջ 126։*

[57] *Տե՛ս Գիրք հարցողաց, ՁԹ. 469–471, էջ 162–163։*

[58] *Մատենադարան, ձեռ. № 5707. «Այլեւ զայդ հարցէր Անանիա, եթէ որչափ մասունք են, որ մարդն կատարեալ խոնարհութիւն ստանա», թերթ 329ա (այսուհետեւ՝ ԱՆԱՆԻԱ, Խոնարհութիւն)։ Թերթ 329ա–329բ. «Արդ քանզի խոնարհութիւն է գլուխ առաքինութեան, վասն որոյ մարգարէն ասէ. պատարագ աստուծոյ հոգի խոնարհ զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ աստուած ոչ արհամարհէ [Սաղ. Ծ. 19]. եւ Եսայի ասէ յով բնակեցայց թէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս եւ որ դողան ի բանից իմոց [տե՛ս Եսայի ԿԶ. 2]։ Եւ նոյն ինքն տէրն ասէ որ խոնարհեաց [...] զանձն՝ բարձասցի [տե՛ս Ղուկ. ԺԴ. 11, Մատթ. ԻԳ. 12]։ Եւ առաքեալ ասէ ամենայն խոնարհությամբ [լաւ] զմիմեանս համարել քան զանձինս [տե՛ս Փիլ. Բ. 3]»։*

[59] *Տե՛ս Գիրք հարցողաց, ՁԹ., էջ 162–163։*

վական են. «[...] եւ եթէ կամիք բնակել ընդ միմեանս, զխոնարհութեան եւ սիրոյ բուռն հարէք, զի խոնարհութիւն եւ սէր՝ անքակ պահէ ի միմեանց»[60]։

Ուխտանեսը բնորոշում է Անանիայի առաջնորդությունը եւ նրա վանական վարդապետական կարգը համաձայն վանական կանոնական չափանիշի. Անանիան իր վարքով ուսուցանում է Քրիստոսի հեզությունը եւ խոնարհությունը. «[...] քանզի գիտեմք զքեզ ճշմարիտ աշակերտ գոլ Յիսուսի հեզոյն եւ մարդասիրին, եւ ուսեալ ի Նմանէ հեզութիւն եւ խոնարհութիւն զոր սկսաւ Ինքն առնել եւ ուսուցանել», եւ՝ «Վասն զի ուսեալ յԱստուծոյ եւ ուսուցեալ զբազումս բազում անգամ, եւ ի մանկութենէ առեալ զլուծ խոնարհութեան, եւ ի նմանէ սնեալ եւ ուսեալ. զամենայն գործս առաքինութեան, եւ աստուածային բարեպաշտութեամբ դայակեալ եւ դաստիարակեալ զմանկունս հաւատոյ Նոր Սիոնի»[61]։

Այս բոլոր արծարծումներում առկա են ընդհանուր սուրբգրային հղումներ, որոնք բերում են այն եզրահանգման, որ Ուխտանեսը խորապես գիտակ է վանական ապրելակերպի դրույթներին, եւ որ վանական առաջնորդի իր նկարագրություններն ունեն հստակ աղբյուր։

Այսպիսով՝ Քրիստոսին եւ առաքյալին հետեւելու հորդորանքը (ըստ Մատթ. ԺԱ. 29 եւ Ա. Կորնթ. ԺԱ. 1) հիմք է դնում ճշմարիտ աշակերտության գաղափարին։ Ըստ Ուխտանեսի՝ իր պարկեշտ վարքով Անանիան ընթանում է առաքելական շավղով՝ նմանվելով Պողոս առաքյալին եւ դառնալով «նրա օրինակ» («տարացոյց նորին»)[62]։ Նման կենցաղ վարել հնարավոր է միայն այն դեպքում, երբ մարդ հրաժարվում է աշխարհի բարքերից եւ հետեւում է Քրիստոսին. «Այլ եւ արդ մեք իսկ սպանանելով զանդամս երկրաւորս ըստ իւրում բանին. «Եւ եթէ ես Աստուածոյ կեցից եւ ընդ Քրիստոսի ի խաչ ելից [Գաղատ. Բ. 19]»։ Եւ դարձեալ. «Ո՛չ եմ էս կենդանի, այլ կենդանի է յիս Քրիստոս [Գաղատ. Բ. 20]». Եւ որ մեռանի մարմնով, ըստ Աստուծոյ կենդանանայ հոգով. «Սպանեցէ՛ք,– ասէ,– զանդամս ձեր զերկրաւորս [Կողոս. Գ. 3]» ի բաց ընկնելով զամենայն կիրս՝

---

[60] Ա ն ա ն ի ա, *Խոնարհութիւն, թերթ 329ա–329բ։*

[61] Ո ւ խ տ ա ն է ս, *Պատասխան, Ա. 37, էջ 450–451։*

[62] Ո ւ խ տ ա ն է ս, *Պատասխան, Ա. 42, էջ 451. «[...] վասն զի անսպառ խաղացումն սուրբ եւ երկրպագելի Հոգւոյն շնորհացն ի քեզ տեսանել՝ ո՛վ աստուածարեալ տէր եւ բազմերջանիկ հայր՝ երկրորդ Կեփաս եւ առաջին առաքեալ. որ եւ նորին շաւղաւք շրջեալ հանգիտանման գոլ նմա՝ մանաւանդ եթէ հանգունապատիւ տարացոյց զնորոյն մեզ ցուցանելով, նաեւ հանգիտահաւասար իսկ նմա երեւեալ մեզ»։*

որ ըստ աշխարհի գործի հակառակ ճշմարտութեանն, եւ ի խաչ ելանել յաշխարհի՝ որպէս եւ գրեալ է. նաեւ եթէ մեռանել իսկ հասանէ, եւ զա՛յն եւս կրել [...]»[63]։

Նման կերպ աշխարհից հրաժարվելու եւ առաքելական վարքով ապրելու հնարավորություն է ընձեռում վանական միջավայրը։ Սկզբունքորեն աշխարհից հրաժարվելը նախապայման է վանական կենցաղավարության համար։ Պատահական չէ, որ այս պահանջը դրվում է վանական սահմանադրության սկզբնամասում. հինգերորդ հարց. «Վասն անզբաղ մտածութեան», վեցերորդ. «Զի հարկաւոր է առանձնանալ», ութերորդ. «Եթէ արժան է նախ հրաժարել յամենայնէ եւ այսպէս հպել յաստուածային ի վարս»։ Աշխարհից հրաժարվելն ընկալվում է որպես Աստծուն սիրելու նշան։ Հինգերորդ հարցի պատասխանն սկսվում է այսպես. «Զայս միայն գիտել արժան է, զի ո՛չ այլ իմիք պատուիրանացն պահպանութիւն, եւ ոչ նոյն ինքն առ Աստուած զսէրն, եւ ոչ առ ընկերն, կարեմք ուղղել, յորժամ այլ եւ այլ զմտածութիւնսն մոլորեցուցանեմք»[64]։ Ահա թե ինչու ով ցանկանում է հետեւել Աստծուն, պետք է կտրի կապն աշխարհիկ բարքերի հետ. «Այլ լուծանել արժան է ի կապանաց նախանձու կենցաղոյս, որք ճշմարտութեամբ Աստուծոյ զհետ երթալ հանդէրձեալ են, այսինքն է ամենեւին հրաժարել, եւ մոռացմամբ հին բարքն ուղղին»[65]։ Նույնը Կեսարացին ընդգծում է ութերորդ հարցում. «Եւ միոյ բանին, որ վասն Քրիստոսին ամենայն աշխարհ խաչեալ եւ նա աշխարհի [Գաղատ. Զ. 14], ո՞րպէս տակաւին կարէ լինել ընդունակ մասանցն աշխարհի [...] Իսկ Պաւղոսի, որում աշխարհ ի խաչ ելեալ եւ նա աշխարհի [տե՛ս Գաղատ. Բ. 19]։ Ասպէս որ յոյժ ցանկութիւն ունիցի զհետ երթալ Քրիստոսի, ոչ ինչ այնուհետեւ ի կեանս յայսոսիկ դառնալ կարասցէ [...]»[66]։

Ուխտանեսը եւս, վկայակոչելով Պողոս առաքյալի խոսքերը (Ա. Կորնթ. Ի. 28, Գաղատ. Բ. 19, Գաղ. Բ. 20, Կողոս. Գ. 5)[67], հորդորում է այսուհետեւ անխափան հետեւել Քրիստոսին. «Արդ պարտ է զհետ ընթանալ, եւ բուռն հարկանել զբարի գործոց, եւ գնալ ի ճանապարհս Տեառն՝ անխեթ

---

[63] ՈՒԽՏԱՆԷՍ, *Պատասխան, Ա. 22–23, էջ 449։*
[64] *Գիրք հարցողաց, Ե. 129, էջ 50։*
[65] *Գիրք հարցողաց, Ե. 132, էջ 51։*
[66] *Գիրք հարցողաց, Ը. 163, 166, էջ 62։*
[67] *Տե՛ս* ՈՒԽՏԱՆԷՍ, *Պատասխան, Ա. 21–24, էջ 449։*

անխոտոր, եւ պահել զպատուիրանս Նորա, եւ առնել զիրաւունս, եւ գործել զարդարութիւն յամենայն ժամ մինչեւ ի կէտ սահմանեալ կոչմանն Քրիստոսի [...]»[68]։ Ակնհայտ է, որ վանական միջավայրն Ուխտանեսի համար այն վայրն է, որտեղ մարդը կարող է հետեւել Քրիստոսին եւ իրագործել Նրա պատվիրանները, որի վառ օրինակն Անանիան է. «[...] աստուածային շնորհիւ պայծառացեալ, եւ ձրիւք Սուրբ Հոգւոյն առլցեալ գիտութեամբ, եւ հոգեւորական երգով գեղգեղմամբ գեր ի վերոյ քան զամենեսեան, եւ ամենայն պատուիրանաց Աստուծոյ հասեալ եւ հաստատեալ քան զբազումս՝ ո՛վ աստուածազարդ եւ վսեմական տէր իմ տէր՝ եւ տիեզերական վարդապետ [...]»[69]։ Շնորհիվ իր առաջնորդության՝ Նարեկավանքը վերածվել է Աստծու գավիթի, որտեղ վանական համայնքն սպասում է Քրիստոսի գալստյանը. «Եւ կանխաւ առաջնորդեալ զքեզ ինքն յանդաստանս հոգեւորս ընդ արթնեալ եւ ընդ զգուշացեալ մշակս սպասես գալստեան Տեառն»[70]։

Շատ կարեւոր է Ուխտանեսի այն միտքը, որ վանական համայնքը հետամուտ է լինում առաքելական շավղին։ Այս ճանապարհով շարժվելու առաջնորդությունը վստահված է վանական առաջնորդին, որն իր վարքով նմանվում է առաքյալներին. «Իսկ դու կենդանախարուկեալ քոյին սուրբ եւ պարկեշտ վարուք, եւ յարաճգնեալ խստակիր վշտամբերութեամբ, եւ կենդանի վկայեալ ի մարմնի զանմարմնոցն բերելով նմանութիւն[71], մարգարէաքարոզ եւ առաքելաշնորհ բանիւ ուղղանաւորեալ զբազում ի վշտաց եւ ի նեղութենէ նեղ եւ նուրբ կենաց ծովածուփ կենցաղոյս արտաքս բերելով, եւ ի նոյն շաւիղ շրջուցեալ. յորում քում առաքելական ոտք շրջեալ ի խաղաղութիւն ըստ մարգարէին [տե՛ս Երեմ. ԻԸ. 9], եւ աւետարանեալ ի խաղաղութիւն զԲանն կենաց, որ եւ ասել կարասցես

---

[68] ՈՒԽՏԱՆԷՍ, *Պատասխան, Ա. 27, էջ 449։*

[69] ՈՒԽՏԱՆԷՍ, *Պատասխան, Ա. 38, էջ 451։ Տե՛ս ծնթ. 24։*

[70] ՈՒԽՏԱՆԷՍ, *Պատասխան, Ա. 40, էջ 451։*

[71] *Անմարմիններին, այսինքն՝ հրեշտակներին նմանվելը վանականի վարքի բարձրագույն նպատակներից է. տե՛ս* U. RANKE-HEINEMANN, Zum Ideal der Vita angelica im frühen Mönchtum [Vita angelica *բարձրագույն նպատակը սկզբնական վանականության մեջ]*. Geist und Leben *29 (1956) 347–357։ Տե՛ս նաեւ՝* ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ, *Խրատք ճգնաւորաց, ԻԳ. 98–99, 102, էջ 135. «Զի վարք ճգնաւորաց՝ երկնայնոցն նմանեցան, եւ ի նոցանէ ունին զհանգամանս կարգեաց արուեստից ըստ ամենայն հանդիսից։ Զի երկրաւոր բանակք ճգնաւորաց հշմարտեալք հրեշտակական կարգաւորութեամբ՝ զերկնաւոր բանականցն ունին զհամեստութիւն։ [...] Եւ իմանալի է զբանակս ճգնաւորաց, որք զհրեշտակային կարգս զգեցեալ ունին ի յերկրի, ի նոյն կարգս հրեշտակաց վերամբառնան ի տեղիս անկելոց հրեշտակացն»։*

համարձակապէս զմարգարէին բան, թէ՝ «Ահաւասիկ ես եւ մանկունք իմ՝ զոր ետ ինձ Աստուած [Եսայի Ը. 18]»[72]։

Այսպիսով՝ Անանիան դասվում է այն շնորհակիր վարդապետների շարքին, որոնք, վերածվելով կենդանի Աստծու Բանի տաճար-բնակարանի, դառնում են կենդանի ուղեցույց՝ «գնալ ի ճանապարհս Տեառն՝ անխէթ անխոտոր»՝ հաստատված առաքյալների եւ մարգարեների հավատքի հիմքի վրա։ Անանիայի շնորհիվ է, ուրեմն, վանական համայնքը կարգվում ճշմարիտ աշակերտության վիճակում. «[...] վասն զի աշակերտք եմք աւրինացն Աստուծոյ եւ մագարէիցն, նաեւ առաքելոցն իսկ, եւ ամենայն սուրբ հարցն եւ վարդապետացն [տե՛ս Ա. Կորնթ. ԺԲ. 28], որք խաւսեցան մեզ զբանն կենաց, մանաւանդ թէ քաղաքակիցք սրբոց եւ ընտանիք Աստուծոյ, շնորհաւք (եւ) որդեգրութեամբ եւ տուն եւ տաճար բնակութեան Բանին Աստուծոյ [տե՛ս Ա. Կորնթ. Գ. 16 եւ Զ. 19], շինեալ ի վերայ հիման հաւատոյ առաքելոց եւ մարգարէից»[73]։

Այս հարակցությունը հիմք է դնում շարունակական աշակերտության գաղափարին, որը հաստատված է առաքյալների եւ մարգարեների ճշմարիտ հավատի հիմքով։ Վանական համայնքը, որը ստուգապես ընթանում է այս աշակերտության ճանապարհով, բնականաբար ընդգրկված է Եկեղեցու շրջանակներում։ Աշակերտության այս գաղափարն իր ընդհանուր իմաստով տրված է Հաճախապատումում. «Այլ որպէս էրն եւ է եւ կայ յաւիտեան, ինքն միայն գիտէ. այլ սիրովն իւրով յայտնեցաւ արարածոց, եւ խնամովք իւրովք ծանուցեալ եղեւ։ Այլ եւ զարարածս կոչեաց յիւր բարերարութեանն յաշակերտութիւն զազգ մարդկան. նախ զառաքեալս, ասէ Պաւղոս, ապա զմարգարէս, ապա զվարդապետս [տե՛ս Ա. Կորնթ. ԺԲ. 28] եւ որ զկնի այսորիկ»[74]։

Շարունակությունը՝ հաջորդիվ

---

[72] ՈՒԽՏԱՆԷՍ, Պատասխան, Ա. 45, էջ 452, տե՛ս այս իմաստով ծնթ. 61։

[73] ՈՒԽՏԱՆԷՍ, Պատասխան, Ա. 27, էջ 449–450։

[74] Յաճախապատում ճառք, Յաղագս ամենասուրբ Երրորդութեան, Բ. 99–100, էջ 13, նաեւ՝ Բ. 120, էջ 14։